ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
ՀՏՋՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/11 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք. Երևան «14» մայիսի 2025թ.
ժամը՝ 12:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«29» ապրիլի 2025թ. թիվ 806-Ա հրամանով (փոփոխված «02» մայիսի 2024թ. թիվ 836-Ա հրամանով)** ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոցի», «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի միջնակարգ դպրոցի», «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Շ. Ազնավուրի անվան թիվ 3 հիմնական դպրոցի» և «ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցի» վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/11** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Սպարտակ Պետրոսյան՝ Հանձնաժողովի նախագահ
Աննա Երիցյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Անահիտ Թադևոսյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարինե Կարապետյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լիլիթ Սեդրակյան՝ Հանձնաժողովի բացող անդամ
Ռոզա Դանիելյան՝ Հանձնաժողովի բացող անդամ

1. Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 Հայտերը բացվել են **2025 թվականի մայիսի 14-ին, ժամը 12:00-ին** էլեկտրոնային գնումների *Armeps (www.armeps.am)* համակարգի միջոցով, ք.Երևան, Կ.Ուլնեցի 31 , 2-րդ հարկ, 206 սենյակ հասցեում:

2. *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները*

2.1 Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հայտ է ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից՝

ՀՀ	Մասնակիցների անվանումները	Հասցե	էլեկտրոնային փոստ	ՀՎՀՀ	Հեռախոս
1	«Շեն տուն» ՍՊԸ «Այպոշին» ՍՊԸ կոնսորցիում	ք. Վանաձոր, Ազատամարտիկների 27	shen-tun@mail.ru	06940806	077747770
		ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52	irtig@inbox.ru	06933045	091081856
2	«Գովա» ՍՊԸ և «Հեմ Էներջի» ՍՊԸ կոնսորցիում	Երևան-Սևան մայրուղի 2/1	gova2007@mail.ru	01009071	077260808
			lusine76m@mail.ru	00908672	093507711

		ք. Երևան, Կոմիտասի պող.,18-6			

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

3.1 Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցների կողմից հայտերը (ծրարները) կազմվել և ներկայացվել են էլեկտրոնային տարբերակով՝ Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգով, և հրավերով սահմանված կարգով:

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին, տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորման, տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

4.1 Հանձնաժողովը փաստում է, որ հայտերը՝ կից փաստաթղթերով, ներկայացվել են էլեկտրոնային տարբերակով՝ Armeps համակարգով և ենթակա են հետագա գնահատման, բացառությամբ այն հայտի, որի ստուգման արդյունքում պարզ դարձավ, որ մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

«Գովա» ՍՊԸ և «Հեմ Էներջի» ՍՊԸ կոնսորցիումի, որի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի Հավելված 3-ով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևին, մասնավորապես համաձայն հրավերի՝ կոնսորցիումով հանդես գալու դեպքում պետք է նշվի կոնսորցիումի անվանումը, այլ ոչ կոնսորցիումի մեկ անդամի անվանումը:

Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված

5.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

ՀՀ դրամ

Չափաբաժին 1: ***ՀՀ «Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոցի» վերանորոգման աշխատանքներ***

Հ/Հ	*Գնման Գին*	*Մասնակցի անվանումը*	*Առաջարկված գինը առանց ԱԱՀ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գինը*	*Հայտի ապահովման առկայությունը (առկա է/առկա չէ)*
1	*156 223 018*	*«Գովա» ՍՊԸ և «Հեմ Էներջի» ՍՊԸ կոնսորցիում*	*130 102 515*	*26 020 503*	*156 123 018*	*առկա է*

Չափաբաժին 2: *ՀՀ «Լոռու մարզի Լեռնավանի միջնակարգ դպրոցի» վերանորոգման աշխատանքներ*

Հ/Հ	Գնման Գին	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/առկա չէ)
1	152 690 768	«Շեն տուն» ՍՊԸ «Այպոշին» ՍՊԸ կոնսորցիում	105 738 000	21 147 600	126 885 600	առկա է

Չափաբաժին 3: *ՀՀ «Լոռու մարզի Սպիտակի Շ. Ազնավուրի անվան թիվ 3 հիմնական դպրոցի» վերանորոգման աշխատանքներ*

Հ/Հ	Գնման Գին	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/առկա չէ)
1	159 211 294	Հայտ չի ներկայացվել				

Չափաբաժին 4: *ՀՀ «Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցի» վերանորոգման աշխատանքներ*

Հ/Հ	Գնման Գին	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/առկա չէ)
1	155 488 942	Հայտ չի ներկայացվել				

5.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացրած գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

6. Հանձնաժողովը որոշեց

6.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ՀՏՀՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/11 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով՝ «Գովա» ՍՊԸ և «Հեմ Էներջի» ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատել անբավարար և մերժել:

6.2 ՀՏՋՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/11 ծածկագրով գնման ընթացակարգը 1,3,4-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ 1-ին չափաբաժնի մասով ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ի մասով, 3,4-րդ չափաբաժինների մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով:

6.3 ՀՏՋՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/11 ծածկագրով գնման ընթացակարգի 1,3,4-րդ չափաբաժինների մասով հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեքստը՝ համաձայն հավելվածի:

6.4 ՀՏՋՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/11 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացույցային օր:

6.5 Հետագա գնահատման ենթակա մասնակցի կողմից ներկայացված հայտը ներառել է նաև հայտի ապահովում՝ հրավերի պահանջներին համապատասխան ձևով, և նշված հայտի ապահովումը Մասնակցի կողմից ներկայացվել է լուսապատճենված տարբերակով, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով , որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

6.6 Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 6-րդ բաժնի 6.5-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող 2-րդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝

Սպարտակ Պետրոսյան _____

անդամներ՝

Խաչիկ Մարգարյան _____

Աննա Երիցյան _____

Անահիտ Թադևոսյան _____

Նարինե Կարապետյան _____

Լիլիթ Սեդրակյան _____

Ռոզա Դանիելյան _____

քարտուղար՝

Ալիսա Նիկոլայան _____